



Հաստատված է  
«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ  
Խորհրդի կողմից  
16/05/2014 թ-ին

**ՀՐԴԵՀԻՑ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ  
ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՎԱԾ ԱՅԼ  
ՎՆԱՍՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

---

(Ֆիզիկական անձանց գույքի ապահովագրության Պայմաններ)

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

2014

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ
5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ
7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)
8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ
10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
11. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
12. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)
14. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
15. ՍՈՒԲՐՈԳԱՅԻՍ
16. ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒՄԸ

**1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

- 1.1. **Ապահովագրող**՝ «ՌԵՍՈ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան ստեղծված և ՀՀ տարածքում ոչ կյանքի ապահովագրություն և ոչ կյանքի վերաապահովագրություն իրականացնելու համար լիցենզավորված իրավաբանական անձ:
- 1.2. **Ապահովադիր**՝ Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած գործունակ ֆիզիկական անձ:
- 1.3. **Շահառու**՝ Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցումներ ստանալու համար նշանակված իրավաբանական կամ ֆիզիկական անձ: Շահառու կարող է լինել այն անձը, ով օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահ ունի:
- 1.4. **Ապահովագրության օբյեկտ**՝ Ապահովադրի կամ Շահառուի՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը, որոնք կապված են ապահովագրված գույքի, վերջինիս տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունքների հետ:
- 1.5. **Ապահովագրության պայմաններ** (այսուհետ՝ Պայմաններ)՝ սույն ապահովագրության պայմանները, որոնց հիման վրա կնքվում է ապահովագրության պայմանագիրը: Պայմանները կազմում են սույն ապահովագրության դասի գծով կնքվող ապահովագրության պայմանագրի անբաժանելի մաս:
- 1.6. **Ապահովագրության պայմանագիր** (այսուհետ՝ Պայմանագիր)՝ Ապահովադրի և Ապահովագրողի միջև համաձայնություն, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված վճարի դիմաց ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում հատուցել Ապահովադրին կամ այլ անձին, որի օգտին կնքվել է Պայմանագիրը, այն վնասը, որն առաջացել է այդ պատահարի հետևանքով: Պայմանագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների նկատմամբ: Պայմանագրով գույքը կարող է ապահովագրվել հօգուտ այն անձի /ապահովադրի կամ շահառուի/, որը օրենքի, այլ իրավական ակտի կամ Պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահ ունի: Պայմանագրի դրույթները սույն Պայմանների նկատմամբ գերակայող ուժ ունեն:
- 1.7. **Ապահովագրության դիմում**՝ Ապահովագրողի պահանջով Ապահովադրի կողմից գրավոր ձևով ներկայացվող տեղեկություններ, որը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից՝ համաձայն Ապահովադրի կողմից տրամադրված տեղեկատվության: Դիմումում ներառված տեղեկությունների իսկությունն Ապահովադիրը հաստատում է իր ստորագրությամբ:
- 1.8. **Ապահովագրական ռիսկ**՝ դեպք կամ իրադարձություն, որի ուժով իրականացվում է ապահովագրություն: Դեպքը կամ իրադարձությունը, որը դիտվում է որպես ապահովագրական ռիսկ, պետք է օժտված լինի ի հայտ գալու հավանականությամբ և պատահականությամբ:
- 1.9. **Ապահովագրական պատահար**՝ Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի վրա հասնելու արդյունքում առաջանում է Պայմանագրով նախատեսված Ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:

- 1.10. **Ապահովագրական գումար**՝ Պայմանագրով սահմանված գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրության յուրաքանչյուր պատահարի տեղի ունենալու պարագայում, Պայմանագրով նախատեսված կարգով վճարել ապահովագրական հատուցում:
- 1.11. **Ապահովագրավճար**՝ Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովագրողի կողմից Ապահովագրողին ապահովագրության դիմաց տրվող վճարն է, որն Ապահովագրողը պարտավոր է վճարել Ապահովագրողին Պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով:
- 1.12. **Չհատուցվող գումար (Ֆրանշիզա)**՝ Պայմանագրով նախատեսված վնասի այն մասն է, որը ենթակա չէ Ապահովագրողի կողմից հատուցման և կարող է սահմանվել ինչպես բացարձակ մեծությամբ, այնպես էլ Ապահովագրական գումարի կամ ապահովագրական հատուցման նկատմամբ հաշվարկվող տոկոսի միջոցով: Չհատուցվող գումարը վերաբերում է յուրաքանչյուր Ապահովագրական պատահարին և յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի դեպքում նվազեցվում է ապահովագրական հատուցումից:
- 1.12.1. Պայմանական չհատուցվող գումար՝ այս դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասը չի գերազանցում Պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:
- 1.12.2. Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ այս դեպքում Ապահովագրողն ազատվում է Պայմանագրում նշված չհատուցվող գումարի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:
- 1.13. **Ապահովագրական հատուցում**՝ գումար, որն Ապահովագրողը պարտավորվում է վճարել Ապահովագրողին՝ Ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում: Ապահովագրական հատուցման գումարը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել Ապահովագրական գումարի չափը:
- 1.14. **Ապահովագրության տարածք**՝ տարածք, որտեղ տարածվում է Պայմանագրի իրավական ուժը և Պայմանագրում նշված Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:
- 1.15. **Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափ**՝ գումար, որը չի գերազանցում Պայմանագրով սահմանված Ապահովագրական գումարը, և որի շրջանակներում Ապահովագրողը պարտավորվում է վճարել Ապահովագրական հատուցում Ապահովագրական պատահարի մեկ (յուրաքանչյուր) կամ բոլոր դեպքերի համար, որը տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում:
- 1.16. **Կոնստրուկտիվ** տարրեր (Շինությունն առանց ներքին հարդարանքը կամ ինժեներական սարքավորումները հաշվի առնելու)՝ պատեր, միջնորմներ, ծածկեր, հիմք, աստիճաններ, տանիք՝ ներառյալ ջրատար խողովակների համակարգն ու ծածկը, շինության արտաքին հարդարանք:
- 1.17. **Ներքին հարդարանք և ինժեներական սարքավորումներ**՝ բոլոր տեսակի ներքին սվաղի, ներկարարության, ապակեպատման, պաստառապատման և երեսպատման

աշխատանքներ, հատակի ծածկեր, դռների կառուցվածքներ (մուտքի և միջսենյակային), ներառյալ հենց դուռը, դռան շրջանակը, բացառությամբ բնակարանի մուտքի դռան, արտաքին հարդարանքը, պատուհանային բլոկներ՝ ներառյալ ապակեպատումը, տիպային շինարարական նախագծով չնախատեսված, լրացուցիչ կառուցված այլ միջնորմներ, ներբնակարանային աստիճաններ, տեղադրված (ամրացված) սանտեխնիկայի ստացիոնար սարքավորումներ, օդորակիչներ, գազօջախներ և էլեկտրական օջախներ, բուխարիներ, հեռուստա- և ռադիո ալեհավաքներ, ջեռուցման, ջրա-գազա-ջերմա-էլեկտրամատակարարման, օդափոխության, տարբեր տիպի մաքրման, կոյուղուն լրացուցիչ միացված սարքավորումներ, թափոնների հեռացման, օդորակման, ջրամատակարարման համակարգեր:

## **2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ**

- 2.1. Սույն Պայմանների համաձայն ապահովագրության մասնակիցներ են հանդիսանում Ապահովագրողը, Ապահովադիրը, Շահառուն, եթե այդպիսին Ապահովադրի կողմից նշանակվել է:
- 2.2. Սույն Պայմանների համաձայն Ապահովագրողը գույքի ապահովագրության պայմանագրեր է կնքում ցանկացած գործունակ ֆիզիկական անձի հետ:

## **3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ**

- 3.1. Սույն Պայմաններով ապահովագրության ենթակա է հետևյալ շարժական և անշարժ գույքը.
  - 1) Շենքերի, շինությունների, կառույցների, բնակարանների կամ սենյակների կոնստրուկտիվ տարրերը, այդ թվում պատուհանների և դռների կոնստրուկցիաները (բացի միջսենյակայիններից), էլեկտրահաղորդալարերի ցանցը, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման համակարգերի խողովակաշարերը,
  - 2) Հարդարման տարրերը, այդ թվում՝ բոլոր ներքին և/կամ արտաքին երեսպատման և ներկարարական աշխատանքները, այդ թվում՝ ներքին հարդարման աշխատանքները, պատերի, հատակների, առաստաղների ծածկույթները, միջսենյակային դռների կառույցները, ներառյալ ապակեպատումը, միջսենյակային պատուհանային կոնստրուկցիաները,
  - 3) Շենքերի, շինությունների, կառույցների, բնակարանների կամ սենյակների տեխնիկական սարքավորումները, որոնք իրենց մեջ ներառում են ջեռուցման համակարգերը (այդ թվում հատակի, պատերի, առաստաղի ջեռուցման համակարգերը), հսկողության և պաշտպանության համակարգերը (այդ թվում տեսախցիկները), հրդեհային անվտանգության, օդափոխության, օդորակման, ջրամատակարարման (այդ թվում՝ ջրակողպման սարքավորումները, լվացարանները, լոգարանները, լոգախցիկներ և այլն), կոյուղու (այդ թվում սանհանգույցի սանտեխնիկական սարքավորումները), գազամատակարարման, էլեկտրասնուցման համակարգերը, Պայմանագրում նշված այլ սարքավորումներ,

- 4) Շարժական գույքը, որն իր մեջ ներառում է տնային և անձնական կենցաղի առարկաներ, այդ թվում՝ կահույք, կենցաղային առարկաներ, ներքին հարդարման առարկաներ և այլն,
- 5) Լանդշաֆտային կառույցներ և պատվարներ, լանդշաֆտային դիզայնի տարրեր, հողամասի ինժեներական համակարգերը,
- 6) Պայմանագրում նշված այլ գույք, բացառությամբ 3.3. կետում նշվածներից:

**3.2.** Միայն Պայմանագրով նախատեսված լինելու, գույքի ամբողջական և մանրամասն ներկայացված ցանկի առկայության և Ապահովագրական գումարների որոշման հնարավորության դեպքում, ապահովագրության ենթակա է նաև հետևյալ գույքը.

- 1) թանկարժեք քարերից կամ մետաղներից պատրաստված իրեր,
- 2) գեղանկարներ, նկարներ, քանդակներ, գրքեր, նամականիշերի, մետաղադրամների և արվեստի այլ ստեղծագործությունների հավաքածուներ,
- 3) կրոնական նախապատվության առարկաներ,
- 4) շինարարական պատրաստության բարձր մակարդակ ունեցող անավարտ շինարարությամբ շենքերը, շինությունները և կառույցները (պարտադիր է համարվում հիմքի, պատերի, տանիքի, փակ լուսամուտախորշերի և դռնախորշերի առկայությունը),
- 5) համակարգչային և համանման համակարգերի տեղեկատվության տեխնիկական կրիչները, մասնավորապես մագնիսական ժապավենները և տեսաերիզները, մագնիսական սկավառակները, հիշողության բլոկները և այլն,
- 6) շինարարական, գյուղատնտեսական մեքենաները և սարքավորումները, կցորդները, ժամանակավոր կացարանները, տրանսպորտային միջոցները, բացառությամբ 3.3 կետի 7-րդ ենթակետում նշվածներից,
- 7) աուդիո, վիդեո, ֆոտոսարքավորումները, էլեկտրոնիկան և կենցաղային տեխնիկան, երաժշտական գործիքները, չափող և օպտիկական սարքերը, հագուստը, սպասքը, գործիքները, սպորտային և որսորդական գույքը:
- 8) 3.2.1 Արվեստի ստեղծագործությունների, հազվագյուտ օբյեկտների, կրոնական նախապատվության առարկաների ապահովագրությունն իրականացվում է միայն Ապահովագրի կողմից ապահովագրության օբյեկտների իսկության և արժեքի մասին լիցենզավորված փորձագետի եզրակացությունը ներկայացնելու դեպքում:

**3.3.** Բոլոր դեպքերում ապահովագրման ենթակա չեն՝

- 1) կանխիկ փողը՝ ՀՀ դրամով և արտարժույթով, վճարման համար անհրաժեշտ վճարային համակարգերով նախատեսված պլաստիկ քարտերը,
- 2) բաժնետոմսերը, պարտատոմս և այլ արժեթղթեր,
- 3) ձեռագրերը, նախագծերը, գծագրերը և այլ փաստաթղթերը, հաշվապահական և գործառնական այլ մատյանները,
- 4) մոդելները, մակետները, նմուշները, ձևաթղթերը և այլն,
- 5) ձուլակտորներով թանկարժեք մետաղները և թանկարժեք քարերը՝ առանց շրջանակների,
- 6) համակարգչային տեխնիկական կրիչների և նմանատիպ համակարգերի վրա պարունակվող տեղեկատվությունը,
- 7) պետական մարմիններում գրանցման ենթակա տրանսպորտային միջոցները,

- 8) Ապահովադրի (Շահառուի) սեփականությունը չհանդիսացող կամ վարձակալված սակայն ապահովագրության տարածքում գտնվող շարժական գույքը,
- 9) Ապահովագրության տարածքում՝ բաց երկնքի տակ պահվող կամ բաց կառույցների/ծածկերի ներսում պարունակվող շարժական գույքը, նույնիսկ եթե այն պաշտպանված է փափուկ նյութերով (պարուսինով, թաղանթով, փշով կոնստրուկցիայով և նմանատիպ այլ միջոցներով),
- 10) կենդանիները,
- 11) վթարային, խարխուլ կամ կապիտալ վերանորոգման ենթակա դուրս գրված շենքերն ու շինությունները,
- 12) սննդամթերքը, ոգելից խմիչքները և ծխախոտը, օժանելիքները, կոսմետիկ միջոցները,
- 13) գույքը, որը գտնվում է այնպիսի գոտում, որին սպառնում են փլուզումներ, սողանքներ, ջրհեղեղներ, ինչպես նաև ռազմական գործողությունների կամ բնական աղետների գոտում՝ նման վտանգի մասին սահմանված կարգով հայտարարելու պահից սկսած,
- 14) ՀՀ օրենսդրությանը համապատասխան շրջանառությունից հանված կամ շրջանառությունում սահմանափակ այլ գույք:

**3.4.** Պայմանագիրը կարող է կնքվել ինչպես 3. – 3.2. կետերում նշված ցանկացած օբյեկտների նկատմամբ, այնպես էլ այդ օբյեկտների համակցման դեպքերում:

#### **4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ**

##### **4.1. «ՀՐԴԵՆՑ, ԿԱՅԾԱԿԻ ՀԱՐՎԱԾ, ԳԱԶԻ ՊԱՅԹՅՈՒՆ»**

Սույն ռիսկի գծով վնասը հատուցվում է հետևյալ դեպքերում.

- 1) ապահովագրված գույքի վրա կրակի, վառվող ապրանքի, տաք գազերի, հրդեհի ընթացքում բարձր ջերմաստիճանի ազդեցության հետևանքով առաջացած վնասները,
- 2) կայծակից առաջացած էլեկտրական պարպման (կայծակի հարված) ազդեցության հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասները,
- 3) ապահովագրված գույքի վրա հրդեհի մարման և կանխարգելման նպատակով օգտագործված կրակմարիչ միջոցների ազդեցության հետևանքով առաջացած վնասները,
- 4) գազի պայթյունի հետևանքով առաջացած վնասները:

4,2,Սույն Պայմանների շրջանակներում հրդեհ ասելով պետք է հասկանալ կրակի վառման և պահպանման հատուկ վայրերից դուրս առաջացած անվերահսկելի այրումը, այդ թվում նաև դիտավորյալ այրումը, որն ունակ է ինքնուրույն տարածվելու և նյութական վնաս հասցնելու:

4,3,Սույն Պայմանների շրջանակներում կայծակի հարվածն իրենից ներկայացնում է ամպրոպից առաջացած էլեկտրական լիքը, որի դեպքում էլեկտրականությունը ջերմային, մեխանիկական և էլեկտրական ազդեցություն է թողնում ապահովագրված գույքի վրա:

4,4,Սույն Պայմանների շրջանակներում պայթյունն իրենից ներկայացնում է կարճատև ժամանակահատվածում սահմանափակ ծավալով մեծ էներգիայի նպատակային անջատման գործընթաց, որը պայմանավորված է գազերի ընդարձակման հատկությամբ:

4.1.1. «ՀՐԴԵՆ, ԿԱՅԾԱԿԻ ՀԱՐՎԱԾ, ԳԱԶԻ ՊԱՅԹՅՈՒՆ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ չի համարվում և հատուցման ենթակա չէ.

- 1) վնասը, որն առաջացել է ապահովագրված գույքը տեխնոլոգիական գործընթացին համապատասխան (օրինակ՝ չորացում, եփում, արդուկում, տապակում, ջերմային մշակում կամ մետաղների հալեցում) կրակով, ջերմությամբ մշակելու կամ այլ ջերմային ազդեցության ենթարկելու հետևանքով՝ դրա հատկությունները փոխելու նպատակով,
- 2) ապահովագրված սարքավորմանը, սարքերին, տեխնիկային հասցված վնասը, որն առաջացել է էլեկտրական հոսանքի կարճ միացման հետևանքով, էլեկտրացանցում բեռնվածության, էլեկտրական հոսանքի լարման անկման կամ բարձրացման, էլեկտրական ինդուկցիայի, թափառող ալիքների կամ մագնիսականության ազդեցության արդյունքում:

#### **4.2. «ՋՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍ»**

Սույն ռիսկի գծով հատուցվում է՝

1. Ապահովագրված գույքին ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և հակահրդեհային համակարգերի վթարի հետևանքով այդ համակարգերի ջրի կամ գոլորշու հասցրած վնասները, այդ թվում՝ ապահովագրված տարածքից դուրս տեղի ունեցած վթարների հետևանքով ապահովագրված գույքին հասցրած վնասները,
2. ապահովագրված գույքին՝ Ապահովադրին (Շահառուին) չպատկանող տարածքներից հոսած ջրի կամ այլ հեղուկի հասցրած վնասները:

##### **4.2.1. Շենքերի, շինությունների, կառույցների, բնակարանների կամ սենյակների ապահովագրության ժամանակ հատուցվում են նաև.**

1. ծախսերը՝ կապված ապահովագրված շենքերում, շինություններում, կառույցներում, բնակարաններում կամ սենյակներում անմիջականորեն գտնվող ջրատար, ջեռուցման, կոյուղու և հրդեհային համակարգերի հանկարծակի վնասի վերացման հետ: Յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով խողովակների փոփոխման անհրաժեշտության դեպքում հատուցվում են խողովակների վնասված հատվածի երկու գծամետրի փոփոխության արժեքը չզերազանցող ծախսերը: Խողովակաշարերին կցված համակարգերի և սարքերի (ներառյալ ծորակները, բաքերը, լոգարանները, ջերմափոխանակիչ, ջեռուցման կաթսաները, բոյլերները և այլն) փոփոխման անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար վերանորոգման և այդպիսի համակարգերի փոփոխման ծախսերը հատուցվում են Պայմանագրի ընդհանուր ապահովագրական գումարի 0.1% չզերազանցող չափով:
2. 4.2. կետի 1-ին ենթակետում նշված, անմիջականորեն ապահովագրված շենքերում, շինություններում և կառույցներում գտնվող անհատական ջեռուցման



համակարգերով անհատական կառույցներում -30°C ցածր օդի ջերմաստիճանի դեպքում խողովակների սառեցումից առաջացած ծախսերը: Յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի գծով խողովակների փոփոխման անհրաժեշտության դեպքում հատուցվում են խողովակների վնասված հատվածի երկու գծամետրի փոփոխության արժեքը չգերազանցող ծախսերը:

4.2.2. **«ԶՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍ»** ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ.

1. եթե վնասը հետևանք չէ սույն Պայմանների 4.2. կետում նշված պատճառների այդ թվում ապահովագրված տարածքների մաքրման, ջրհեղեղների, խորտակման կամ ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրացման արդյունքում,
2. ապահովագրության վայր հանդիսացող տարածքի կտուրի և/կամ միջբլոկային (միջպանելային) կարերով կամ չփակված պատուհաններով, դռներով և այլ անցքերով անձրևի, ձյան, որոտի, կեղտի ներթափանցման հետևանքով առաջացած վնասը,
3. ապահովագրված շենքի կամ տարածքի վերանորոգման կամ վերակառուցման անցկացման արդյունքում առաջացած վնասը,
4. ապահովագրված տարածքից կամ շինություններից դուրս գտնվող խողովակաշարերի և դրանց հետ կապված համակարգերի և սարքերի մշակման կամ փոխարինման հետ կապված ծախսերը,
5. Ապահովադրի կողմից վթարային կամ հնացած ջրատարի, ջեռուցման, կոյուղու և հրդեհային համակարգերի շահագործման, Ապահովադրի կողմից այդ համակարգերի շահագործման նորմատիվային ժամկետները խախտելու կամ չպահպանելու դեպքում առաջացած վնասը,
6. տարածքների ներսում երկարատև խոնավության հետևանքով առաջացած վնասը (բորբոս, սունկ և այլն):

4.2.3. **«ԶՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍ»** ռիսկով ապահովագրվելու ընթացքում **Ապահովադիրը պարտավոր է՝**

1. Ապահովագրության վայրում ապահովել ջրամատակարարման, ջեռուցման և հակահրդեհային համակարգերի ճիշտ շահագործումը, ժամանակին դրանց սպասարկումը և մշակումը,
2. եթե շինությունների շահագործման ընթացքում շրջակա օդի ջերմաստիճանը բացասական է, անհատական ջեռուցման համակարգում կիրառել այնպիսի հեղուկներ, որոնք չեն սառչում շրջակա օդի շինություններ դեպքում,
3. շենքերի, շինությունների անհատական ջեռուցման համակարգի գործընթացի ընդմիջման ժամանակ շրջակա օդի ցածր ջերմաստիճանի դեպքում, դատարկել համակարգում եղած ջուրը:

#### **4.3. «ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐ»**

Սույն ռիսկի գծով հատուցվում է՝

- 1) երկրաշարժի, հրաբխի ժայթքման հետևանքով առաջացած վնասները,
- 2) ջրհեղեղի հետևանքով առաջացած վնասները,

- 3) մրրիկի, փոթորիկի հետևանքով առաջացած վնասները,
  - 4) ցունամիի հետևանքով առաջացած վնասները,
  - 5) սողանքի, գրունտի նստվածքի, քարահոսքի, ձնահոսքի ցեխահոսքի հետևանքով առաջացած վնասները,
  - 6) կարկուտի հետևանքով առաջացած վնասները:
- **Երկրաշարժ**՝ երկրաֆիզիկական վտանգավոր երևույթ է, որն արտահայտվում է երկրակեղևի կտրուկ տատանումներով և ցնցումներով՝ ժամանակի շատ կարճ տևողության ընթացքում: Երկրաշարժ առաջանում է երկրակեղևում կամ վերին միջակա երկրապատյանում հանկարծակի տեղաշարժերի ու խզվածքների հետևանքով եւ առաձգական (սեյսմիկ) տատանումների ձևով հաղորդվում է մեծ հեռավորությունների վրա:  
**Հրաբխոդրվում է**՝ հրաբխային գործընթաց, որն ուղեկցվում է հրաբխի խառնարանից գազերի, քարերի, մոխրի և մագմայի եռման արտահոսքով:
  - **Ջրհեղեղ**, հեղեղում՝ ջրային զանգվածի արտահոսք ջրավազանի սովորական սահմաններից, որն առաջանում է ձյան ինտենսիվ հալոցքի, մեծ քանակությամբ տեղումների, ջրի քամու կողմից քշվելու, սառցե խցանումների, ջրամբարների և ամբարտակների վնասվելու, լեռնային զանգվածների՝ ջրի ակունքներ թափվելու արդյունքում, ինչը խոչընդոտում է ջրի բնականոն հոսքին:
  - **Փոթորիկ**՝ Ավերիչ ուժգնությամբ եւ զգալի երկարատևությամբ քամի, որի արագությունը գերազանցում է 32մ/վ:
  - **Մրրկայտուն**՝ Ավերիչ ուժ ունեցող ուժեղ մեծածավալ մթնոլորտային պտտահողմ՝ մոտ 1000մ տրամագծով, որտեղ օդի պտտային արագությունը հասնում է 100 մ/վ:
  - **Ցունամի**՝ մեծ բարձրության ծովային ալիքներ (մինչև մի քանի տասնյակ մետր), որոնք առաջանում են ծովի հատակի տեղաշարժի հետևանքով՝ երկրաշարժերի, սողանքների և հրաբխի ժայթքման արդյունքում:
  - **Սողանք**՝ Լեռան լանջով ապարների զանգվածի լանջերով տեղաշարժ (սահք)՝ սեփական քաշի և լրացուցիչ բեռնվածության ներգործությամբ, որն առաջանում է լանջի ողողաքանդման, ջրադինամիկ ճնշման, գերխոնավացման, սեյսմիկ կամ տեխնածին ցնցումների և այլ ընթացքների հետևանքով: Դասակարգվում են ըստ հզորության (խոշոր, միջին և մանր) և ըստ շարժման արագության (շատ արագ, արագ, չափավոր եւ դանդաղ):
  - **Գրունտի նստվածք**՝ բնական ճաքերի կամ հողային դատարկությունների մեջ գրունտի իջեցում բնական երևույթների արդյունքում, այդ թվում՝ գրունտային ջրերի մակարդակի փոփոխության, կարստային կամարների փլուզման, տորֆի հանքակուտակների այրման արդյունքում և այլն:
  - **Քարահոսք**՝ Լեռների եւ ձորերի գառիվայր ու գառիթափ լանջերից խոշոր, հաճախ հսկայական չափերի ապարազանգվածների պոկումն ու փլուզումը, որն առաջանում է գլխավորապես լեռնային ապարների հողմահարության ընթացքների և մակերևութային ու ստորգետնյա ջրերի ներգործությունից դրանց կապակցվածության թուլացման հետևանքով:
  - **Ձնահոսք**՝ ձյան զանգված, որն ընկնում կամ սահում է լեռնալանջերից ավելի քան 20 մ/վ արագությամբ:
  - **Ցեխահոսք**՝ ցեխային կամ ցեխաքարային հոսանքներ, որոնք հանկարծակի առաջանում են լեռնային գետերի ակունքներում հեղեղումների պատճառով՝ առատ տեղումների և ինտենսիվ ձնհալքի արդյունքում:
  - **Կարկուտ**՝ մթնոլորտային տեղումների տարատեսակ, որն արտահայտվում է երկնքից թափվող տարբեր չափի սառցե գոյացությունների տեսքով:
- 4.3.1. Երկրաշարժից, սողանքից, գրունտի նստվածքից վնասները հատուցման

ենթակա են միայն այն դեպքում, եթե ապահովագրված շենքերի և շինությունների նախագծման, շինարարության և շահագործման ժամանակ պատշաճ կերպով հաշվի են առնվել այդ շենքերի ու շինությունների տեղանքի սեյսմիկ և երկրաբանական պայմանները:

4.3.2. Փոթորկից, մրրկասյունից առաջացած վնասները հատուցվում են միայն այն դեպքում, եթե վնաս պատճառած քամու արագությունը գերազանցել է 32 մ/վ և հաստատված է ՀՀ համապատասխան հիդրոմետ ծառայության տեղեկանքով:

4.3.3. Պայմանագրով նախատեսված լինելով՝ նաև Ապահովագրողը հատուցում է՝ ապակյա պատերի, ավելի քան 1.5 ք/մ մակերես ունեցող պատուհանների և դռների, ապակիների ցուցափեղկերի, ապակե նկարների, ինչպես նաև պատուհանների և դռների շրջանակների կամ այլ եզերապատումների, որոնց վրա ամրացված են նմանատիպ ապակիները, վնասը կամ ոչնչացումը:

4.3.4. Շինություններին ամրակցված առարկաներին հասցված վնասը հատուցվում է, միայն եթե Պայմանագրում դա նախատեսված է:

4.3.5. «ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որն առաջացել է.

- 1) սողանքի, գրունտի նստելու, հյուսի, քարահոսքի, ձնահոսքի, ցեխահոսքի, տեղանքի հեղեղման արդյունքում առաջացած վնասը, որն առաջացել է պայթյունային աշխատանքների, փոտրակներից կամ քարհանքերից գրունտի հանման, հողային կամ շինմոնտաժային աշխատանքների, ինչպես նաև օգտակար հանածոների արդյունահանման և մշակման արդյունքում,
- 2) ապահովագրված գույքի վնասվածքը, կորուստը, ոչնչացումը, որը տեղի է ունեցել մրրկի, փոթորկի հետևանքով, եթե քամու արագությունը չի գերազանցել 32մ/վ,
- 3) ապահովագրության տարածքներ չփակված պատուհաններով, դռներով և այլ անցքերով անձրևի, ձյան, որոտի, կեղտի ներթափանցման հետևանքով առաջացած վնասը, եթե այդ անցքերը չեն առաջացել բքի, փոթորկի կամ մրրկասյան հետևանքով,
- 4) ջրի ազդեցության արդյունքում առաջացած այլ վնասները, եթե այդ ազդեցությունը չի առաջացել սույն Պայմանների 4.2.1. կետում նշված պատճառներից մեկի արդյունքում,
- 5) շենքերի, շինությունների և կառույցների խարխուլ լինելու հետևանքով դրանց, ինչպես նաև այդ խարխուլ շենքերում, շինություններում և կառույցներում ապահովագրված գույքին հասցված վնասը:

4.3.6. Կապիտալ վերանորոգման կամ այլ պատճառներով անավարտ շինարարությամբ շենքերն ու շինությունները, որոնք երկարաժամկետ ազատվել են Ապահովադիրի (Շահառուի), Մեփականատիրոջ կամ Ապահովագրված գույքը փաստացի օգտագործող անձանց կողմից, «ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐ» ռիսկի գծով ապահովագրության չեն ընդունվում:

4.3.7. Ապահովադիրը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրվածությունների և կառույցների խարխուլ լինելու հետևանքով դրանց, ինչպես նաև այդ խարխուլ դրանք այլ պատճառներով ավելի քան 60 օրով ազատելու դեպքում:

#### **4.4. «ԿՈՏՐԱՆՔՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿՈՂՈՊՈՒՑ**

4.4.1. Համաձայն 4.4. ենթակետի ենթակա է հատուցման վնասը, որը պատճառվել է՝  
ա) կոտրանքով գողության,

բ) կողոպուտի հետևանքով:

4.4.2. Սույն Պայմանների իմաստով կոտրանքով գողություն նշանակում է ապահովագրված գույքի գաղտնի հափշտակությունը, որը կատարվել է հետևյալ ճանապարհով (եղանակով)՝

ա) ապահովագրված տարածք ապօրինի մուտք գործելով (դռներ, պատուհաններ ջարդելով/ճեղքելով, կեղծ բանալիներ, սարքեր կամ այլ տեխնիկական միջոցներ օգտագործելով),

բ) ապահովագրության տարածքի սահմաններում գտնվող և ապահովագրված գույքը դրանցում պահելու համար նախատեսված իրերը, պարագաները, միջոցները կոտրելով, վնասելով, կեղծ բանալիներ, սարքեր կամ այլ տեխնիկական միջոցներ օգտագործելով,

գ) շինության կոնստրուկտիվ մասերին (պատեր, հատակ, առաստաղ, տանիք, դռներ, պատուհաններ) վնաս պատճառելով, այդ թվում ապակիները կոտրելով,

4.4.3. Սույն Պայմանների իմաստով կեղծ են համարվում բանալիները, որոնք պատրաստվել են այն անձանց հանձնարարությամբ կամ թույլտվությամբ, որոնք իսկական բանալիները տնօրինելու իրավունք չունենին :

4.4.4. Միայն գույքի անհետանալը ապահովագրության տարածքից բավարար չէ կեղծ բանալիների օգտագործումն ապացուցելու համար:

4.4.5. Կեղծ բանալիների, սարքերի կամ այլ տեխնիկական միջոցների կիրառումը կարող է հաստատվել ՀՀ Ոստիկանության կամ այլ իրավասու մարմնի կողմից:

4.4.6. Սույն Պայմանների իմաստով կողոպուտ նշանակում է՝ ապահովագրված գույքի բացահայտ հափշտակությունը, որն իրականացվել է՝

ա) ապահովագրված տարածքում գտնվող որևէ անձի կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

բ) ապահովագրված տարածքում գտնվող որևէ անձի անօգնական վիճակում գտնվելու ժամանակ:

4.4.7. Պայմանների 4.4. ենթակետով գույքն ապահովագրելու դեպքում Ապահովագրողը կհատուցի նաև կոտրանքով գողության կամ կողոպուտի կամ դրա փորձի հետևանքով ապահովագրված շինության կոնստրուկտիվ մասերին (պատեր, առաստաղ, հատակ, տանիք և այլն) պատճառված վնասները վերացնելու հետ կապված ծախսերը:

4.4.8. Պայմանների 4.4. ենթակետով գույքն ապահովագրելու դեպքում Ապահովադիրը պարտավոր է:

ա) ապահովագրված տարածքում որևէ անձի բացակայության ժամանակ ապահովել բոլոր դռների (արտաքին) և պատուհանների փակված լինելը,

բ) ապահովագրված տարածքում որևէ անձի բացակայության ժամանակ ապահովել պահպանման համակարգի ճիշտ միացված լինելը, եթե Պայմանագրում նշված է նման համակարգի առկայության մասին:

4.4.9. Պայմանների 4.4. ենթակետով գույքն ապահովագրելու դեպքում ապահովագրության ռիսկայնության բարձրացում է համարվում՝

ա) ապահովագրված տարածքից բնակիչների 40 օրից ավելի ժամկետից բացակայելը,

բ) շենքերի, շինությունների, որոնցում գտնվում է ապահովագրված գույքը, վերանորոգումը կամ վերակառուցումը,

գ) պահպանման համակարգի անսարք վիճակում գտնվելը,

դ) ապահովագրված տարածքի փականների բանալիների կորստի դեպքում դրանց համանման կամ ավելի ապահով փականներով փոխարինելու համար Ապահովադրի կողմից անհրաժեշտ գործողություններ անհապաղ չձեռնարկելը:

4.4.10. Պայմանների 4.4. ենթակետով ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որը պատճառվել է՝

ա) կոտրանքով գողության, կողոպուտի հետևանքով, եթե դա իրականացվել է Ապահովադրի հետ ապրող կամ նրա հետ համատեղ տնտեսություն վարող անձանց կողմից,

բ) կոտրանքով գողության, կողոպուտի հետևանքով, եթե դա իրականացվել է պահպանման համակարգի անջատված կամ անսարք վիճակում գտնվելու ժամանակ, եթե Պայմանագրում նշված է նման համակարգի առկայության մասին,

գ) շինությունից դուրս գտնվող (տանիքին, պատերի արտաքին կողմին ամրացված, ապահովագրված հողակտորի վրա գտնվող) գույքին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով,

դ) գույքին՝ կոտրանքով գողությունից կամ կողոպուտից բացի այլ միջոցով:

#### **4.5. «ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»**

Սույն ռիսկի գծով հատուցվում է ապահովագրված գույքին երրորդ անձանց գործողությունների հետևանքով պատճառված վնասը, որը ՀՀ գործող վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով և քրեական օրենսդրության համաձայն որակվում է որպես.

1. գույքի դիտավորությամբ ոչնչացում կամ վնասում,
2. վանդալիզմ:

4.5.1. «ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ հետևյալ դեպքերում առաջացած վնասը.

1. ապահովագրված գույքի քանակի նվազեցման, անհետացման, գողության, կորստի կամ անհիմն յուրացման,
2. ապահովագրված շենքերի փլուզում, ապահովագրված շենքերում, շինություններում, կառույցներում և բնակարաններում ճաքերի և այլ թերությունների առաջացում, ապահովագրված շենքի վերանորոգում կամ վերակառուցում, այդ թվում՝ հարևան շենքերում իրականացվող վերանորոգում և վերակառուցում, ապահովագրության տարածքում կամ նրա մոտակայքում հողային կամ շինմոնտաժային աշխատանքների անցկացում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,
3. երրորդ անձանց կողմից այն ապահովագրված գույքի նկատմամբ հակաօրինական գործողությունների իրականացում, որը փոխանցվել է Ապահովադրի կողմից այդ անձանց վարձակալության, լիզինգի կամ այլ պայմանագրով,
4. ցանկացած պատճառով ջերմաստիճանի փոփոխություն, էլեկտրաէներգիայի, ջրի, գազի և ջեռուցման մատակարարման խափանում,
5. վարակ, աղտոտում կամ կոռոզիա,
6. ապահովագրված գույքի վրա նկարելը, նկարների փակցումը, գրելը, գրությունների փակցումը, պաստառների սոսնձումը և այլ նմանատիպ գործողությունների իրականացումը:

#### **4.6. «ԲԱԽՈՒՄ, ՀԱՐՎԱԾ»**

Սույն ռիսկի գծով հատուցվում է վնասը, որն առաջացել է.

1. տրանսպորտային միջոցների բախման հետևանքով,
  2. ապահովագրված գույքի կենդանիների հետ բախման հետևանքով,
  3. ծառերի կամ այլ առարկաների վայր ընկնելու հետևանքով,
  4. թռչող սարքերի կամ դրանց մասերի վայր ընկնելու հետևանքով,
  5. թռչող սարքերի կողմից արձակված ձայնային ալիքների հարվածի հետևանքով:
- 4.6.1. «ԲԱԽՈՒՄ, ՀԱՐՎԱԾ» ռիսկի գծով ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ հետևյալի արդյունքում առաջացած վնասը.
1. հարվածների և բախումների հետևանքով, որոնց պատճառ են հանդիսացել Ապահովադրին կամ Շահառուին կամ իրենց ընտանիքների անդամներին կամ Ապահովադրի հետ համատեղ բնակվող, համատեղ տնտեսություն վարող անձանց կամ իրենց մոտ աշխատող անձանց պատկանող, ինչպես նաև նշված անձանց մոտ ժամանակավոր օգտագործման մեջ գտնվող տրանսպորտային միջոցները, կենդանիները կամ թռչող սարքերը,
  2. սողանքի, գրունտի նստելու, հյուսի, քարահոսի, ձնահոսքի, ցեխահոսի, տեղանքի հեղեղման հետևանքով, որն առաջացել է պայթյունային աշխատանքների, փոսորակներից կամ քարհանքներից գրունտի հանման, հողային կամ շինմոնտաժային աշխատանքների, ինչպես նաև օգտակար հանածոների արդյունահանման և մշակման հետևանքով,
  3. վարակի, աղտոտման կամ կոռոզիայի հետևանքով,
  4. տարերային աղետի, կոտրանքով գողության և/կամ գողության, երրորդ անձանց հակաօրինական գործողությունների:

#### **4.7. «ԱՊԱԿԻՆԵՐԻ ԿՈՏՐՈՒՄ»**

Սույն ռիսկի գծով հատուցվում է վնասը, որն առաջացել է շենքերի և շինությունների ապակյա տարրերի կոտրման հետևանքով:

Սույն ռիսկի գծով կարող են ապահովագրվել Պայմանագրում թվարկված շենքերի և շինությունների հետևյալ ապակյա տարրերը՝ դրված շրջանակների մեջ կամ մոնտաժված իրենց ամրացման տեղում.

- 1) դռների և պատուհանների ապակիները,
  - 2) ցուցափեղկերը,
  - 3) ապակե նկարները,
  - 4) շենքի ներսի պատերի ապակյա երեսպատումը,
  - 5) ապակյա լուսային գմբեթները,
  - 6) ապակյա կամ նմանատիպ նյութերից գովազդային ցուցանակները:
- 4.7.1. Ապահովադիրը պարտավոր է.
- 1) թույլ չտալ ապահովագրված ապակիների սառցապատումը կամ հալեցումը տաքացնող սարքավորումների, ինչպես նաև եռման ջրի միջոցով,
  - 2) տեղադրել ջեռուցման սարքերը, սալօջախները կամ գովազդային լուսային սարքավորումները ապահովագրված ապակիներից 30 սմ ոչ պակաս հեռավորության վրա:
- 4.7.2. «ԱՊԱԿԻՆԵՐԻ ԿՈՏՐՈՒՄ» ռիսկի գծով Ապահովագրական պատահար չեն համարվում և հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են՝

- 1) ապահովագրված ապակյա տարրերի սխալ տեղադրման արդյունքում առաջացած ճաքերի, ինչպես նաև ապահովագրված ապակյա տարրերի մոնտաժի, դեմոնտաժի, վերանորոգման, փոխադրման ժամանակ առաջացած ճաքերի հետևանքով,
- 2) ապակիների հղկված մակերևույթների կամ հայելային ծածկույթների վրա քերծվածքների առաջացման հետևանքով,
- 3) ապահովագրված ապակիների պատահական կամ մտադրված ներկման հետևանքով,
- 4) Ապահովադրի կողմից Պայմանների 4.7.1. կետում նշված պարտականությունների չկատարման հետևանքով:

**4.8.** Սույն Պայմաններով Ապահովադրի գույքը կարող է ապահովագրվել ինչպես սույն Պայմանների 4.1.-4.6. կետերում թվարկված բոլոր ռիսկերից, այնպես էլ մեկ կամ մի քանի ռիսկերի համակցությունից:

**4.9.** Մի քանի պատահարները միասին, որոնք տեղի են ունեցել միաժամանակ համարվում են մեկ ապահովագրական պատահար, եթե այդ դեպքերն ունեն միևնույն առաջացման պատճառը:

**4.10.** Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որն առաջացել է ահաբեկչական, դիվերսիոն գործողությունների արդյունքում, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

**4.11.** Ապահովագրական ռիսկ, ապահովագրական պատահար չի համարվում՝

1. բազմաբնույթ ռազմական գործողությունների, գորաշարժերի, միջոցառումների և դրանց հետևանքների, քաղաքացիական պատերազմի, հասարակության կողմից տարբեր ընդվզումների, գործադուլների, առգրավման, բռնագրավման, աշխատանքի ընդհատման, ձերբակալության, քաղաքացիական կամ ռազմական իշխանությունների կարգադրությամբ գույքի ոչնչացման կամ վնասման, պարտադիր ազգայնացման, հատուկ կամ արտակարգ դրության հայտարարման դեպքում առաջացած վնասը,
2. միջուկային պայթյունի, ռադիացիայի կամ ռադիոակտիվ վարակման հետևանքով առաջացած վնասը,
3. Ապահովադրի (Շահառուի), ինչպես նաև այն անձի կողմից, որի (Ապահովադրի իմացությամբ) տիրապետության և օգտագործման տակ է գտնվում ապահովագրված գույքը, ապահովագրված գույքի, ինչպես նաև ապահովագրված գույքի տեղակայման շենքերում, կառույցներում և շինություններում հրդեհային անվտանգության կանոնների, աշխատանքների արտադրության տեխնոլոգիաների, պահպանման, շահագործման, տեխնիկական սպասարկման կանոնների խախտման կամ չպահանման արդյունքում առաջացած վնասը,
4. Ապահովադրի (Շահառուի) կամ նրա ընտանիքի անդամների հետ համատեղ բնակվող, համատեղ տնտեսություն վարող անձանց կողմից, ինչպես նաև այն անձանց կողմից, ովքեր գտնվում են աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ Ապահովադրի (Շահառուի) հետ, դիտավորյալ գործողությունների արդյունքում առաջացած վնասը,
5. Ապահովադրի (Շահառուի) բարոյական վնասը, բաց թողնված օգուտը, լճացումը, եկամտի կորուստը և այլ կողմնակի վնասները,
6. ապահովագրված գույքի ինքնահրկիզման, կոռոզիայի, փտման, խմորման, բնական մաշվածության կամ այլ բնական հատկությունների արդյունքում առաջացած վնասը,
7. էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցման կամ տատանման արդյունքում առաջացած վնասը,

8. կոնստրուկցիաների քանդվելու, շենքերի, շինությունների, կառույցների կամ դրանց մասերի փլուզման արդյունքում ապահովագրված գույքին պատճառված վնասը, եթե դա չի առաջացել ապահովագրական պատահարի հետևանքով,
9. ապահովագրությանը ոչ ենթակա գույքին պատճառված վնասը 3.3. կետում թվարկված)
10. Ապահովադրին (Շահառուին) սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքերով չպատկանող գույքին պատճառված վնասը,
11. Ապահովադրի (Շահառուի), երրորդ անձանց հետ պայմանագրային հարաբերություններից բխող հանգամանքների արդյունքում առաջացած վնասը,
12. Ապահովադրի (Շահառուի) կողմից ոչ օրինաչափ գործողությունների իրականացման արդյունքում առաջացած վնասը:

## **5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ**

- 5.1. Գույքը համարվում է ապահովագրված միայն այն վայրում (տարածքներում, շենքերում, շինություններում կամ հողակտորների վրա), որը նշված է Պայմանագրում (այսուհետ՝ ապահովագրության տարածք):
- 5.2. Ներխուժման միջոցով գողությունից կամ կողոպուտից ապահովագրության դեպքում ապահովագրության տարածք է համարվում.
  - 1) Ներխուժման միջոցով գողությունից ապահովագրության դեպքում՝ Պայմանագրում նշված շենքերի տարածքները, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 5.3. Կողոպուտից ապահովագրության դեպքում՝ բացի Պայմանների 5.2. 1) կետում նշված տարածքների, նաև Պայմանագրում նշված հողամասերի կամ այն հողակտորների տարածքները, որոնց վրա կառուցված են ապահովագրված շենքերը, եթե այդ հողամասերը պատնեշված են այնպես, որ բացառվում է դրանց օգտագործումը կողմնակի անձանց կողմից:

## **6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ**

- 6.1. Ապահովագրական գումարը նշվում է Պայմանագրում:
- 6.2. Պայմանագրով կարող են սահմանվել Ապահովագրողի կողմից հատուցումների վճարման սահմանաչափեր՝ որևէ ռիսկի գծով հատուցումների առավելագույն գումարներ, որոնք կիրառելի են ամբողջ ապահովագրված գույքի կամ նրա մի մասի վրա՝ հաշվարկված մեկ Ապահովագրական պատահարի կամ Պայմանագրի գործողության ողջ ժամկետի համար:
- 6.3. Ապահովագրական գումարը ապահովագրության յուրաքանչյուր օբյեկտի և ապահովագրական ռիսկի համար կարող է սահմանվել առանձին:
- 6.4. Եթե Պայմանագրով նախատեսված Ապահովագրական գումարն ապահովագրական արժեքից փոքր է (ոչ լրիվ արժեքով ապահովագրություն), Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողն Ապահովադրին (Շահառուին) հատուցում է վերջինիս կրած վնասը՝ Ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերության չափով/համամասնությամբ: Ընդ որում, Պայմանագրով կարող է



նախատեսված լինել Ապահովագրական հատուցման ցանկացած չափ, բայց ոչ ավել, քան ապահովագրված գույքի իրական արժեքը:

- 6.5. Եթե Պայմանագրում նշված Ապահովագրական գումարը գերազանցում է գույքի ապահովագրական արժեքը, Պայմանագիրը առոչինչ է համարվում Ապահովագրական գումարի այն մասով, որը գերազանցում է գույքի իրական արժեքը: Ապահովադրի կողմից վճարված լրացուցիչ Ապահովագրավճարն այս դեպքում վերադարձման ենթակա չէ:
- 6.6. Ապահովագրական հատուցումը վճարելուց հետո Պայմանագիրը շարունակում է գործել Ապահովագրական գումարի և վճարված Ապահովագրական հատուցման տարբերության գումարի չափով: Ապահովագրական հատուցման վճարումից հետո Ապահովագրական գումարը նվազում է վճարված հատուցման չափով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 6.7. Ապահովագրողն իրավասու է վերականգնել ապահովագրական գումարի նախկին/սկզբնական չափը՝ գործող Պայմանագիրը հավելելու միջոցով: Այս դեպքում Ապահովադիրը ապահովագրական հատուցում վճարելու հետևանքով ապահովագրական գումարի նվազած մասի համար վճարում է լրացուցիչ ապահովագրավճար՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:
- 6.8. Ապահովագրական գումարը Պայմանագրում սահմանվում է ՀՀ դրամով: Կողմերի համաձայնությամբ Ապահովագրական գումարը կարող է սահմանվել նաև արտարժույթով: Այդ դեպքում Ապահովագրական գումարի հաշվարկը կատարվում է Պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեքով: Այս դեպքում Ապահովագրողն արտարժույթի փոխարժեքի փոփոխմանը զուգահեռ իրավունք ունի իրականացնելու Ապահովագրական գումարի վերահաշվարկ: Ապահովագրողին այդպիսի իրավունքի վերապահումը պետք է հատուկ նախատեսված լինի Պայմանագրով:

## **7. ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)**

- 7.1. Պայմանագրում կողմերը կարող են սահմանել չհատուցվող գումար, որը վերաբերում է յուրաքանչյուր Ապահովագրական պատահարին: Պայմանական չհատուցվող գումար սահմանելու դեպքում Ապահովագրողն ազատվում է Ապահովագրական հատուցում իրականացնելու պարտականությունից, եթե վնասի չափը չի գերազանցում չհատուցվող գումարի արժեքը: Եթե վնասի չափը գերազանցում է պայմանական չհատուցվող գումարի չափը, ապա Ապահովագրական հատուցման գումարից չհատուցվող գումար չի նվազեցվում
- 7.2. Ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանելու դեպքում յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի ժամանակ վճարվելիք Ապահովագրական հատուցման գումարից նվազեցվում է ոչ պայմանական չհատուցվող գումարի արժեքը: Եթե Պայմանագրում սահմանված է չհատուցվող գումար և նշված չէ թե չհատուցվող գումարի ինչ տեսակ է կիրառվում (պայմանական, թե ոչ պայմանական), ապա համարվում է, որ Պայմանագրով սահմանված է ոչ պայմանական չհատուցվող գումար:

## **8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 8.1. Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ դրամով կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին անկանխիկ փոխանցման ճանապարհով:

- 8.2. Անկախ Պայմանագրով Ապահովագրական գումարի արտարժույթով սահմանված լինելու փաստից Ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանած փոխարժեքով հաշվարկված գումարի չափով:
- 8.3. Մեկ տարուց ոչ պակաս ժամկետով Պայմանագիր կնքելու դեպքում Ապահովագրողի համաձայնությամբ Ապահովադիրին կարող է տրվել հնարավորություն Ապահովագրավճարի վճարումը կատարել տարածամկետ կարգով: Տվյալ պարագայում Ապահովագրավճարի չափաբաժինները և վճարման ժամկետները սահմանվում են Պայմանագրով:
- 8.4. Տարածամկետ կարգով վճարվող Ապահովագրավճարի՝ վճարման ենթակա առաջին մասն Ապահովադիրը պարտավոր է վճարել Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից ոչ ուշ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 8.5. Եթե Պայմանագրում նշված է տարածամկետ «կիսամյակը մեկ» կամ «երկու վճարումով»՝ «յուրաքանչյուր անգամ Ապահովագրավճարի 50%-ի չափով» վճարման կարգը, ապա Ապահովագրավճարի՝ վճարման ենթակա առաջին մասը չպետք է պակաս լինի Ապահովագրավճարի ամբողջ չափի 50%-ից, իսկ Ապահովագրավճարի մնացած մասի վճարման համար չպետք է սահմանվի ավելի ուշ ժամկետ, քան Պայմանագրի գործողության ժամկետի կետը:
- 8.6. Եթե Պայմանագրում նշված է տարածամկետ «եռամսյակը մեկ անգամ» կամ «չորս չափաբաժնով՝ յուրաքանչյուրն Ապահովագրավճարի 25%-ի չափով» վճարման կարգ, ապա Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրավճարը վճարել չորս հավասար մասերով: Ընդ որում Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրավճարի երկրորդ մասը ոչ ուշ քան ապահովագրության 3-րդ ամսվա լրանալը, երրորդ մասը ոչ ուշ քան ապահովագրության 6-րդ ամսվա լրանալը և չորրորդ մասը ոչ ուշ քան ապահովագրության 9-րդ ամսվա լրանալը:
- 8.7. Մեկ տարուց պակաս ժամկետով Պայմանագիր կնքելու դեպքում Ապահովագրավճարը վճարվում է միանվագ՝ մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 8.8. Ապահովագրավճարը Պայմանագրում նշված ժամկետներում չվճարելու դեպքում (միանվագ վճարման դեպքում) կամ առաջին հերթական Ապահովագրավճարը չվճարելու դեպքում (տարածամկետ վճարման դեպքում), Պայմանագիրը համարվում է ուժի մեջ չմտած:
- 8.9. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հերթական /ոչ առաջին/ Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողը կարող է Ապահովադիրին համապատասխան վճարումը կատարելու համար տրամադրել հնգօրյա լրացուցիչ ժամկետ՝ հերթական /ոչ առաջին/ վճարումը կատարելու համար՝ սկսած Պայմանագրում որպես հերթական վճարման ամսաթիվ նշված ժամկետից: Մինչ լրացուցիչ ժամկետի ավարտն Ապահովագրավճարի վճարման դեպքում Պայմանագիրը շարունակում է գործել և Ապահովագրողը պատասխանատվություն է կրում իր ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով: Եթե լրացուցիչ ժամկետի ընթացքում Ապահովադիրը չի վճարում Ապահովագրավճարը, ապա Պայմանագիրը համարվում է դադարած՝ սկսած Պայմանագրում կամ Պայմաններում որպես հերթական վճարման

ամսաթիվ նշված ժամկետից: Ընդ որում՝ մինչ այդ վճարված Ապահովագրավճարներն Ապահովադիրին չեն վերադարձվում:

**8.10.** Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրական վճարի գումարը:

**9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

**9.1.** Պայմանագիրը կնքվում է գրավոր և պետք է համապատասխանի ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված վավեր գործարքի ընդհանուր պայմաններին: Պայմանագիր կնքելիս Ապահովադիրը.

1. լրացնում է ապահովագրության դիմում և/կամ Ապահովագրողի կողմից սահմանված ձևով կազմում է ապահովագրվող օբյեկտ(ներ)ի նկարագրությունը և լրացրած դիմումը և/կամ նկարագրությունը փոխանցում Ապահովագրողին: Ապահովադիրի ցանկությամբ կամ նրա խոսքերով նկարագրությունը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից: Դիմումի/նկարագրության բոլոր կետերը պետք է լրացված լինեն երկակի մեկնաբանության հնարավորությունը բացառող ընթեռնելի ձեռագրով: Դիմումի/նկարագրության մեջ նշված տեղեկատվության ճշմարտացիության պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Լրացված դիմումը ստորագրում և վավերացնում է Ապահովադիրը,
2. Ապահովագրողին ներկայացնում է ապահովագրության ենթակա անշարժ գույքի սեփականության վկայական և դրա արժեքը՝ գնահատված լիցենզավորված գնահատողի կողմից,
3. Ապահովագրողին ներկայացնում է ապահովագրության ենթակա շարժական գույքի ցանկը՝ յուրաքանչյուր օբյեկտի գծով նշելով դրա հիմնական բնութագրերը և տարբերակման հատկանիշները: Գույքի ցանկը ստորագրվում է Ապահովադիրի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից,
4. Ապահովագրողին կամ նրա լիազոր ներկայացուցչին տալիս է հնարավորություն կատարել ապահովագրության ենթակա գույքի գնում,
5. Ապահովագրողին է ներկայացնում Ապահովադիրի (Շահառուի)՝ ապահովագրման ենթակա գույքի հանդեպ գույքային շահը հաստատող փաստաթղթեր:

**9.2.** Պայմանագրի կնքումից հետո ապահովագրության դիմումը, զննման ակտը, օբյեկտների նկարագրությունը և ապահովագրված գույքի ցանկը Պայմանագրի անբաժանելի մաս են հանդիսանում:

**9.3.** Պայմանագրի կնքման կամ նրա գործողության ժամանակ Կողմերի համաձայնությամբ Պայմանագրին կից Պայմանների որոշ դրույթներ կարող են փոփոխվել, որոնք չեն հակասի ՀՀ գործող օրենսդրությանը: Պայմանագրի դրույթների և սույն Պայմանների միջև հակասության առկայության դեպքում գերակայող ուժ ունեն Պայմանագրի դրույթները:

**9.4.** Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են գրավոր՝ Կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրերի կնքման միջոցով:

- 9.5. Պայմանագրի գործողության ընթացքում Պայմանագրի կորստի դեպքում Ապահովագրողը, Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա, վերջինիս է տրամադրում Պայմանագրի կրկնօրինակը:
- 9.6. Պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, եթե դրանով այլ բան նախատեսված չէ:
- 9.7. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ապահովագրավճարի վճարման օրվան հաջորդող օրվա 00 ժամ 00 րոպեին, սակայն ոչ շուտ, քան Պայմանագրում որպես Պայմանագրի գործողության սկիզբ նշված ամսաթվի օրվա 00 ժամ 00 րոպեին:
- 9.8. Ընդ որում Ապահովագրավճարի վճարման օր է համարվում.
1. Ապահովագրավճարի կանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի դրամարկղ դրամական միջոցների վճարման օրը:
  2. Ապահովագրավճարի անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովադրի հաշվարկային հաշվից Ապահովագրողի հաշվարկային հաշվին դրամական միջոցների փոխանցման օրը:
- 9.9. Պայմանագրի գործողության ժամկետն ավարտվում է Պայմանագրում որպես Պայմանագրի ավարտման օր հանդիսացող օրվա ժամը 00:00-ին:
- 9.10. Ապահովագրությունը տարածվում է Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո տեղի ունեցած Ապահովագրական պատահարների վրա, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 9.11. Պայմանագիրը դադարում է գործել հետևյալ դեպքերում.
1. Ապահովագրողի կողմից Պայմանագրով նախատեսված իր պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու դեպքում,
  2. այն դեպքում, երբ Ապահովադիրը Պայմանագրով սահմանված ժամկետներում և չափով Ապահովագրավճարի հերթական վճարումը չի կատարել:
  3. դատարանի կողմից Պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու դեպքում,
  4. ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի սննկացման դեպքում,
  5. Ապահովադրի (Շահառուի) կողմից գույքի օտարման դեպքում,
  6. Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ,
  7. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 9.12. Եթե Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է Ապահովագրական պատահարի ի հայտ գալու հնարավորության վերանալու պատճառով և Ապահովագրական ռիսկի գոյությունը դադարում է Ապահովագրական պատահարից գատ այլ հանգամանքներից ելնելով (օրինակ ապահովագրված գույքի ոչնչացումը ոչ ապահովագրական պատահարի հետևանքով), Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադրին Պայմանագրի գործողության ժամկետի չլրացած օրերի համար համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը՝ նվազեցված Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերով (Ապահովագրավճարի 35 %), ինչպես նաև վճարված և վճարման ենթակա հատուցումների չափով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- Վերադարձման ենթակա Ապահովագրավճարի մի մասը հաշվարկվում է համաձայն հետևյալ բանաձևի՝

$$(U - 35\% * U) * n$$

ՎԱ= ----- - Հ,

N

- Ա՝ Պայմանագրով վճարված Ապահովագրավճարը,
- 35 %\*Ա՝ Ապահովագրողի հաստատուն գործառնական ծախսերը,
- Ն՝ Պայմանագրի գործողության ավարտին մնացած ամբողջական ամիսները,
- Հ՝ վճարված և վճարման ենթակա ապահովագրական հատուցումներ,
- Ռ՝ ամբողջական ամիսների քանակը, որոնց ժամկետով կնքվել է Պայմանագիրը,
- ՎԱ՝ վերադարձման ենթակա Ապահովագրավճարը:

**9.13.** 9.12. կետում նշված հանգամանքներից տարբեր այլ հանգամանքներում Պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրավճարը չի վերադարձվում:

**10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

10.1. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է անհապաղ, սակայն Ապահովագրական պատահարի տեղի ունենալուց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, Ապահովագրողին տեղեկացնել Պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին ապահովագրության օբյեկտների վերաբերյալ հայտնած իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները զգալի ազդեցություն կարող են ունենալ ապահովագրական ռիսկի մեծանալու վրա:

Բոլոր դեպքերում էական են համարվում Վկայագրում և սույն պայմաններով նախատեսված փոփոխությունները:

10.2. Ապահովագրական ռիսկը մեծացնող փոփոխությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալներով.

- գույքի օտարումը այլ անձի,
- օգտագործման կամ տիրապետման իրավունքի փոխանցումը այլ անձի,
- գույքի տրամադրումը լիզինգի, գրավի, վարձույթի, վարձակալության պայմանագրով այլ անձի,
- ապահովագրված գույքի տեղակայման շենքերում կամ տարածքներում շինմոնտաժային և/կամ վերկանգնողական աշխատանքների անցկացումը,
- ապահովագրված գույքի գտնվելու վայրի փոփոխությունը:

10.3. Ապահովագրական ռիսկը մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու փոփոխել Պայմանագրի պայմանները կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ Ապահովագրավճար:

10.4. Ապահովադրի՝ Պայմանագրի պայմանների փոփոխմանը չհամաձայնելը և ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ Ապահովագրավճարի վճարումից հրաժարվելը համարվում է Ապահովադրի համաձայնությամբ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցում: Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցված է համարվում Ապահովադրի՝ Պայմանագրի պայմանների փոփոխմանը չհամաձայնելու և ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ Ապահովագրավճարի վճարումից հրաժարվելու պահից:

- 10.5. Ապահովադիրի կամ Շահառուի կողմից սույն պայմանների 10.1. կետով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը և լուծելու ապահովագրության պայմանագիրը և պահանջելու հատուցելու լուծմամբ իրեն պատճառված վնասները կամ նվազեցնելու հատուցման չափը: Պայմանագիրը համարվում է վաղաժամկետ դադարեցված այն պահից, երբ Ապահովագրողին հայտնի են դարձել ապահովագրական ռիսկի մեծացմանը հանգեցնող փոփոխությունների առաջացումը:
- 10.6. Ապահովագրողն իրավունք չունի պահանջելու լուծել Պայմանագիրը, եթե ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքները վերջինիս կողմից դրանց մասին տեղեկացման պահին վերացել են:

## **11. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 11.1. Ապահովադիրն իրավունք ունի՝
1. Պայմանագրի պայմաններում փոփոխություններ կատարելու առաջարկ ներկայացնել Ապահովագրողին,
  2. Սույն Պայմաններին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան վաղաժամ դադարեցնել Պայմանագիրը,
  3. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով ստանալ տեղեկություններ Ապահովագրողի մասին,
  4. Պայմանագրում նշված Շահառուին փոխարինել մեկ այլ անձով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ապահովագրողին: Շահառուն չի կարող փոխարինվել մեկ այլ անձով, եթե նա արդեն կատարել է Պայմանագրով նախատեսված որևէ պարտավորություն կամ Ապահովագրողին ներկայացրել է ապահովագրական հատուցում ստանալու դիմում,
  5. Պայմանագրի պայմաններին համապատասխան ստանալ Ապահովագրական հատուցում:
- 11.2. Ապահովադիրը պարտավոր է՝
1. Պայմանագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի այն հանգամանքների մասին, որոնք կարող են էական նշանակություն ունենալ Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով առաջացած հնարավոր վնասների չափը որոշելու համար, եթե այդ հանգամանքներն Ապահովագրողին հայտնի չեն և չեն կարող հայտնի լինել: Ամեն դեպքում էական են համարվում Ապահովադիրի կողմից Ապահովագրողին հայտնած և Պայմանագրով նախատեսված հանգամանքները,
  2. Պայմանագրով սահմանված Ապահովագրավճարը վճարել ժամանակին Պայմանագրում նշված չափերով և կարգով,
  3. հետևել հակահրդեհային անվտանգության կանոններին, հետևել աշխատանքների արտադրական գործընթացին, ապահովագրված գույքի, ինչպես նաև այն շինությունների և կառույցների պահպանման, շահագործման և տեխնիկական սպասարկման նորմերին, որոնցում գտնվում է այդ գույքը,

Ժամանակին կատարել անհրաժեշտ վերանորոգման և կանխարգելիչ աշխատանքները,

4. ձեռնարկել խելամիտ և հասանելի միջոցառումներ հնարավոր վնասի կանխարգելման և նվազեցման համար,
5. վարել ապահովագրված ապրանքանյութական արժեքների հաշվառում և ապահովել հաշվառման փաստաթղթերի պահպանությունը:

11.3. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի ի հայտ գալու ժամանակ Ապահովադիրը պարտավոր է.

1. անհապաղ, բայց դեպքի տեղի ունենալու մասին իրեն հայտնի դառնալու պահից ոչ ուշ, քան 24 (քսանչորս) ժամվա ընթացքում դիմել համապատասխան իրավասու մարմիններին և ապահովել կատարված դեպքի փաստաթղթային ձևակերպումը և հաստատումը՝ պատահարի պատճառների, ընթացքի, հետևանքների, պատճառված վնասի բնույթի և չափի մասին,
2. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վնասի կանխարգելման և նվազեցման ուղղությամբ, այդ թվում այնպիսի միջոցներ, որոնք գրավոր կերպով առաջարկվել են Ապահովագրողի կողմից, այսինքն գործել այնպես, ինչպես կգործեր, եթե գույքը ապահովագրված չլիներ,
3. դեպքի տեղի ունենալու մասին իրեն հայտնի դառնալու պահից անհապաղ, իսկ դրա անհնարինության դեպքում սահմանված կարգով Ընկերությանը տեղեկացնելուն խոչընդոտող հանգամանքների վերացումից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին հեռախոսազանգով, գրավոր դիմումով, ֆաքսիմիլային կապով կամ հեռագրով տեղեկացնել տեղի ունեցած պատահարի վերաբերյալ՝ նշելով դրա հնարավոր պատճառները և հանգամանքները, դեպքը տեղի ունենալու ժամանակը, վնասի բնույթը, ինչպես նաև.
  - 1) Պայմանագրի համարը և կնքման ամսաթիվը,
  - 2) վնասված օբյեկտի անվանումը և տեղակայման հասցեն,
  - 3) վնասի առաջացման ամսաթիվը և ժամը,
  - 4) վնասի բնույթը, պատճառները և հանգամանքները,
  - 5) վնասի առաջացման ժամանակ Ապահովադրի կողմից իրականացված գործողությունները,
  - 6) վնասի մոտավոր չափը:
4. Ապահովագրական պատահարի վերաբերյալ հայտնելուն խոչընդոտող հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում է Ապահովադիրը,
5. Դեպքի վայրում Ապահովադիրն իրավունք ունի տեղափոխություններ կատարել այն դեպքում, եթե դա պահանջվում է իրավասու մարմինների կողմից՝ ելնելով անվտանգության կամ վնասի չափի նվազեցման միտումներից: Այն դեպքում, երբ անհնար է ապահովագրված գույքը պահպանել այն վիճակում, որում այն հայտնվել է դեպքից հետո, Ապահովադիրը պարտավոր է ֆիքսել դեպքի հետևանքով առաջացած բոլոր

վնասվածքները լուսանկարման, տեսաձայնագրման միջոցով՝ այդ տեղեկությունները տրամադրելով Ապահովագրողին,

6. Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին հնարավորություն ընձեռել վնասված գույքը զննելու և հետազոտելու՝ վնասների պատճառների, չափի և այլ հանգամանքների հայտնաբերման նպատակով, ինչպես նաև Ապահովագրողի պահանջով ապահովել իր ներկայացուցչի ներկայությունը վնասված գույքի զննման ժամանակ,
7. Հայտային դիմումը լրացնել դեպքի մասին Ապահովադրին/Շահառուին հայտնի դառնալուց 3 աշխատանքային օրվա ընթացքում: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը և/կամ Շահառուն ներկայացնում են սահմանված ժամկետը խախտելու հիմնավոր պատճառներ: Ապահովագրողին հատուցման հայտային դիմում ներկայացնելիս, ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.
  - 1) Պայմանագիր,
  - 2) Ապահովագրողի մոտ Ապահովադրի (Շահառուի) շահերը ներկայացնելու իրավունք ընձեռող լիազորագիր,
  - 3) գույքի արժեքը հաստատող (եթե այդպիսիք առկա են) փաստաթղթեր,
  - 4) Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի օրվա դրությամբ Ապահովագրված գույքի նկատմամբ Ապահովադրի սեփականության իրավունքը և այլ գույքային շահը հաստատող փաստաթղթեր (սեփականության իրավունքի վկայական, առք ու վաճառքի պայմանագիր և այլն),
  - 5) վնասված գույքի ցանկը՝ նշելով նրա արժեքը Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի օրվա դրությամբ, ինչպես նաև պահպանված և փրկված գույքի ցանկը՝ ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի օրվա դրությամբ,
  - 6) օրենքով համապատասխան պատահարը քննելու իրավասություն ունեցող իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթեր՝ տեղեկանքներ, որոշումներ, վճիռներ և այլն, որոնցում ամբողջությամբ նշված է .
    - պատահարի վայրը, տեղի ունենալու ամսաթիվը, ժամը, պատճառները, հանգամանքները, նշված մարմինների (պաշտոնատար անձանց) այդ վայր ժամանելու ամսաթիվը և ժամը, վնասված ապահովագրված գույքի անվանումը, վնասների բնույթը և ցանկը,
    - ապահովագրված գույքի սեփականատիրոջ լրիվ անուն/ազգանուն/հայրանուն,
    - տեղի ունեցած իրավախախտումը, վարչական տույժի ենթարկելու որոշումը, այլ տեղեկություններ, որոնք որպես կանոն պետք է նշված լինեն նման բնույթի փաստաթղթերի մեջ,
    - գողության, կողոպուտի կամ ավազակության հատկանիշներով հարուցված քրեական գործի հարուցման վերաբերյալ որոշում,
  - 7) օթերևութաբանական (սեյսմիկ) ծառայության պետական հաստատության կողմից համապատասխան բնական աղետի բնույթը և տևողությունը հաստատող տեղեկություններ,



- 8) իրավասու մարմինների և/կամ ծառայությունների կողմից տրամադրված պատահարների (ջրատար խողովակների և այլ ինժեներական համակարգերի վթարի) ժամը, վայրը, բնույթը և պատճառները հաստատող տեղեկություններ,
  - 9) արձանագրություններ, հրամաններ, կարգադրություններ և այլ փաստաթղթեր՝ կազմված ապահովագրված գույքին պատճառված վնասի փաստով ,
  - 10) Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի ի հայտ գալու փաստը, վնասի առաջացման հանգամանքները և պատճառները, պատճառված վնասի չափը, ապահովագրված գույքի արժեքը, ապահովագրված գույքի և Ապահովագրական հատուցման ստացման նկատմամբ Ապահովադրի (Շահառուի) իրավունքները հաստատող այլ փաստաթղթեր: Եթե համապատասխան իրավասու մարմինները հրաժարվել են տրամադրել Ապահովադրին որևէ փաստաթուղթ, ապա Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին է ուղարկում իր կողմից վերոհիշյալ մարմիններին ուղարկված համապատասխան հարցման և դրա գրավոր պատասխանի կրկնօրինակը:
  8. Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, հայտնել իրեն հայտնի ողջ տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին մեղավոր անձանց նկատմամբ հետադարձ պահանջի իրավունքի (սուբրոգացիա) իրականացման համար:
  9. Իրեն հայտնի դառնալուց անմիջապես հետո Ապահովագրողին տեղեկացնել կորած ապահովագրված գույքի գտնվելու վայրի մասին, եթե վերջինս գտնվել է ու հանձնվել Ապահովադրին (Շահառուին): Ապահովագրված գույքի վերադարձման դեպքում Ապահովագրողին վերադարձնել վճարված Ապահովագրական հատուցումը՝ մասհանելով վնասների վերացման համար կատարված ծախսերը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,
  10. Ապահովագրողին անմիջապես հայտնել երրորդ անձանց կողմից կորստի ենթարկված, ոչնչացված կամ վնասված ապահովագրված գույքի դիմաց փոխհատուցում ստանալու մասին:
  11. Նախքան ապահովագրական հատուցում կատարելն ապահովագրողն իրավունք ունի շահառուից (ներառյալ՝ այն դեպքում, երբ շահառուն ապահովագրված անձն է) պահանջելու ապահովագրության պայմանագրով ապահովադիր կողմի (ներառյալ՝ ապահովադրի, ապահովագրված անձի և շահառուի) ստանձնած պարտականությունների կատարում, որոնք այդ կողմը չի կատարել, սակայն պարտավոր էր կատարել այդ պահի դրությամբ: Եթե շահառուն ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցում ստանալու մասին պահանջ է ներկայացնում, ապա ապահովադիր կողմի նախապես կատարման ենթակա պարտականությունները չկատարելու կամ դրանք ժամանակին չկատարելու հետևանքների ռիսկը կրում է շահառուն:
- 11.4. Ապահովագրողն իրավունք ունի՝
1. Եթե ապահովագրության պայմանագիրը կնքելուց հետո պարզվել է, որ ապահովադիրը սույն Պայմանների 11.2 կետի 1-ին ենթակետում նշված

հանգամանքների մասին Ապահովագրողին հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անվավեր ճանաչել պայմանագիրը և կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 313 հոդվածի 2-րդ կետով նախատեսված հետևանքները.:

2. ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք նրա կարծիքով անհրաժեշտ են վնասի նվազեցման համար,
  3. ինքնուրույն պարզել պատահարի արդյունքում առաջացած վնասի չափը և դրա առաջացման պատճառներն ու հանգամանքները, հիմնավոր կերպով հաստատել առաջացած վնասի չափը, ինչպես նաև հարցումներ ուղարկել իրավասու մարմիններին Ապահովագրական պատահարի նախանշաններ ունեցող դեպքի փաստը, պատճառը և պատճառված վնասի չափը հաստատող փաստաթղթերի ստացման նպատակով,
  4. հետաձգել Ապահովագրական հատուցման վճարման մասին որոշման ընդունումը, մինչև Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի բոլոր հանգամանքների պարզաբանումը, այդ թվում մինչև իրավասու մարմինների կողմից վերջիններիս ուղղված գրավոր հարցումների պատասխանները ստանալը, ապահովագրված գույքի վնասման, կորստի կամ ոչնչացման հետևանքով քրեական գործի հարուցման դեպքում` մինչև քրեական գործով վարույթն ավարտելը,
  5. ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մերժել Ապահովագրական հատուցման վճարումը` Պայմանագրով և/կամ սույն Պայմաններով սահմանված Ապահովադրի (Շահառուի) պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում,
  6. Նախքան ապահովագրական հատուցում տամադրելը Շահառուից պահանջել Պայմանագրով Ապահովադրի վրա դրված, սակայն այդ պահի դրությամբ նրա կողմից չկատարված պարտականությունների իրականացում,
  7. Պայմանագրի գործողության ընթացքում իրականացնել ապահովագրված գույքի գնություն:
  8. Մերժել ապահովագրական հատուցումը եթե Ապահովադիրը կամ Շահառուն արդեն իսկ հատուցում են ստացել վնասը պատճառած անձից` բացառությամբ այն դեպքերի, երբ վնաս պատճառած անձի կողմից հատուցումը ստացվել է չհատուցվող գումարի և/կամ/ ապահովագրական գումարը գերազանցող գումարի գծով:
- 11.5. Ապահովագրողը պարտավոր է`
1. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովադրին ծանոթացնել սույն Պայմաններին և տրամադրել մեկ օրինակ,
  2. մասնագիտական գործունեության ընթացքում չհրապարակել Ապահովադրի (Շահառուի) մասին ունեցած տեղեկությունները, այդ անձանց գույքային վիճակի վերաբերյալ տեղեկությունները` բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

**12. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 12.1. Պայմանագրին և սույն Պայմաններին համապատասխան Ապահովադրի կողմից Ապահովագրական պատահարի առաջացումը հաստատող փաստերի, պատճառների և վնասի չափի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումից հետո Ապահովագրողը կայացնում է Ապահովագրական հատուցման վճարման/մասնակի վճարման կամ վճարումը մերժելու մասին որոշում առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 12.2. Ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում կայացնելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողն իրականացնում է Ապահովագրական հատուցման վճարում:
- 12.3. Վնասի չափը որոշվում է Ապահովագրողի կողմից ապահովագրված գույքի զննման արդյունքում հաստատված տվյալների և Ապահովադրի կողմից ներկայացված և Ապահովագրողի կողմից ձեռք բերված փաստաթղթերի հիման վրա:
- 12.4. Ապահովագրական հատուցումը սահմանվում է պատճառված վնասի չափով, բայց չի կարող գերազանցել Պայմանագրով սահմանված Ապահովագրական գումարը: Ապահովագրական հատուցումը տրվում է Ապահովագրողի կողմից՝ նվազեցնելով Պայմանագրում նշված չհատուցվող գումարը (եթե այդպիսին սահմանված է):
- 12.5. Վնասների նվազեցման համար կատարվող ծախսերը, եթե այդ ծախսերը անհրաժեշտ են և/կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումներով, հատուցման ենթակա են, նույնիսկ եթե համապատասխան միջոցառումներն ապարդյուն են անցել: Ծախսերի անհրաժեշտությունը սահմանվում է Ապահովագրողի կողմից: Այդպիսի ծախսերը ենթակա են հատուցման միայն այն դեպքում երբ վնասի գումարը գերազանցում է Պայմանագրում սահմանված չհատուցվող գումարի չափը: Սույն ծախսերն Ապահովագրական գումարից նվազեցվում են միայն հատուցման դեպքում:
- 12.6. Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա 12.5. կետով սահմանված ծախսերը, ինչպես նաև Ապահովագրական պատահարից հետո տարածքի մաքրման ծախսերը հատուցվում են Ապահովագրական պատահարի հետևանքով վնասված ապահովագրված գույքի Ապահովագրական գումարի 10%-ը չգերազանցող գումարի չափով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:
- 12.7. Եթե վնասված ապահովագրված գույքի վերականգնումն անհնար է կամ վերականգնման համար կատարվող ծախսերը գերազանցում են Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական արժեքը, առկա է լրիվ ոչնչացում: Այդ դեպքում 12.5. կետում նշված ծախսերը կարող են գերազանցել Պայմանագրով սահմանված Ապահովագրական գումարը 10%-ից ոչ ավել:
- 12.8. Ապահովագրական հատուցումը վճարվում է.
1. Գույքի լրիվ կորստի (ոչնչացման) դեպքում Ապահովագրական հատուցումը տրվում է Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական արժեքի չափով՝ նվազեցնելով հետագա օգտագործման համար պիտանի մնացորդների գումարը:  
Ապահովագրված գույքի լրիվ ոչնչացման և/կամ կորստի դեպքում Ապահովադրի (Շահառուն) Ապահովագրողի համաձայնությամբ իրավունք ունի Ապահովագրողի

օգտին հրաժարվել ապահովագրված գույքի նկատմամբ իր իրավունքներից: Այս դեպքում Ապահովագրական հատուցումը տրվում է Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական արժեքի չափով, սակայն ոչ ավել, քան Պայմանագրով սահմանված Ապահովագրական գումարը: Ընդ որում, Ապահովագրական հատուցման վճարումից առաջ Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողի հետ կնքել ոչնչացված գույքի և նրա մնացորդների նկատմամբ իրավունքների փոխանցման վերաբերյալ համաձայնություն:

2. գույքի վնասման դեպքում՝ վերականգնողական ծախսերի չափով, սակայն ոչ ավել, քան Ապահովագրական գումարը և պահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական արժեքը:

Եթե ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական արժեքը՝ պայմանագրի կնքման պահին դրա ապահովագրվող գույքի շուկայական (իրական) արժեքը, էապես տարբերվում է ապահովագրական պատահարի ի հայտ գալու պահին դրա իրական արժեքից, ապա հիմք է ընդունվում իրական արժեքը:

12.9. Գույքի իրական արժեքը որոշվում է.

1. շենքերի և շինությունների ապահովագրության դեպքում՝ տվյալ վայրում շենքերի և շինությունների արժեքի չափով՝ հաշվի առնելով դրանց մաշվածությունը և շահագործման-տեխնիկական վիճակը:
2. սարքավորման, էլեկտրոնային սարքավորման, կահույքի, գույքի կամ տեխնոլոգիական սարքավորման ապահովագրության դեպքում՝ Ապահովադրի կողմից տվյալ գույքի ձեռքբերման և տեղադրման համար իրականացված ծախսերի չափով՝ հաշվի առնելով դրանց ֆիզիկական մաշվածությունը և շահագործման-տեխնիկական վիճակը, բայց ոչ ավել, քան Ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին համանման գույքի ձեռքբերման և տեղադրման համար անհրաժեշտ շուկայական ծախսերը:
3. Ապահովադրի կողմից ձեռք բերված ապրանքանյութական արժեքների ապահովագրության դեպքում՝ դրանց ձեռքբերման համար Ապահովադրի կատարած ծախսերի չափով, բայց ոչ ավել, քան համանման ապրանքանյութական արժեքների Ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահին ձեռքբերման համար անհրաժեշտ ծախսերը:

12.10. Վերականգնողական աշխատանքները ներառում են.

- վերանորոգման (վերականգնողական) համար անհրաժեշտ նյութերի և պահեստամասերի համար կատարված ծախսերը,
- վերանորոգման աշխատանքների վճարման ծախսերը,

12.11. Վերականգնողական աշխատանքները չեն ներառում՝

- ապահովագրված գույքի բարելավման համար կատարվող լրացուցիչ ծախսերը,
- ապահովագրված գույքի ժամանակավոր կամ օժանդակ վերանորոգման համար կատարվող ծախսերը,
- աշխատանքն արագացնելու ծախսերը,
- անհրաժեշտ ծախսերից ավել կատարված ծախսերը,
- չհիմնավորված ծախսերը:

- 12.12.Վերականգնողական ծախսերի որոշման ընթացքում հաշվի է առնվում վնասված ապահովագրված գույքի վերականգնման (վերանորոգման) ընթացքում փոխարինվող ագրեգատների, մասերի, հանգույցների և դետալների մաշվածությունը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 12.13.Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում Ապահովագրողը հատուցում է նաև հետևյալ լրացուցիչ ծախսերը.
1. Ապահովագրական պատահարից հետո վերականգնողական աշխատանքների շրջանում ապահովագրված գույքի ժամանակավոր տեղափոխման ծախսերը, վնասված շինությունից ապահովագրված գույքի տեղափոխման ծախսերը, ապահովագրված գույքի ժամանակավոր պահպանման համար կատարված ծախսերը, ժամանակավորապես զբաղեցվող տարածքների վարձակալության վճարի ծախսերը:
- 12.14.Ապահովագրական հատուցման գումարը Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած բոլոր Ապահովագրական պատահարների համար չի կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված Ապահովագրական գումարը (հատուցման սահմանաչափը), բացառությամբ սույն Պայմանների 12.3. և 12.6. կետում նախատեսված դեպքերից:
- 12.15.Այն դեպքում, երբ Ապահովագրական հատուցման վճարումից հետո հայտնի է դառնում, որ Ապահովադիրը (Շահառուն) իրավունք չուներ ստանալ Ապահովագրական հատուցում, ապա ապահովագրական հատուցումը ստացած անձը պարտավոր է վերադարձնել Ապահովագրական հատուցումը Ապահովագրողին՝ Ապահովագրողի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուց հետո հնգօրյա ժամկետում:
- 12.16.Եթե Ապահովագրողը կամ Ապահովադիրը համաձայն չեն Ապահովագրական պատահարի բացահայտման համար կատարված փորձագիտական եզրակացությունների արդյունքների հետ, ապա նշանակվում է կրկնակի փորձաքննություն:
- 12.17.Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի (նրա ներկայացուցչի) հաշվարկային հաշվից Ապահովադիրին (Շահառուին) դրամական միջոցների փոխանցման օրը, կանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի դրամարկղից Ապահովադիրին կանխիկ գումարով դրա վճարման օրը:
- 12.18.Եթե վերանորոգման արժեքը հաշվի, հրահանգ-պատվերի կամ հաշվարկման ակտի մեջ նշված է արտարժույթով կամ եթե Ապահովագրական գումարը Պայմանագրով սահմանված է արտարժույթով, ապա ապահովագրված գույքի ոչնչացման դեպքում Ապահովագրական գումարից Ապահովագրական հատուցման չափը որոշելիս կիրառվում է Ապահովագրական հատուցման վճարման օրվա դրությամբ տվյալ արժույթի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված փոխարժեքը: Եթե Ապահովագրական հատուցման վճարման օրվա դրությամբ Ապահովագրական գումարի արժույթի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված փոխարժեքը ավելի բարձր է Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ դրա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված փոխարժեքից 20 և ավելի տոկոսով, ապա Ապահովագրական հատուցման հաշվարկի ժամանակ կիրառվում է Ապահովագրական

պատահարի օրվա դրությամբ տվյալ արժույթի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված փոխարժեքը՝ ավելացված 20 տոկոսով: Պայմանագրով կարող է սահմանվել Ապահովագրական արժույթի փոխարժեքի փոփոխման հետ կապված այլ սահմանափակում:

12.19. Ապահովագրողն իրավունք ունի մերժել Ապահովադրին Ապահովագրական հատուցման վճարումը, եթե.

1. Ապահովադիրը Ապահովագրական պատահարի մասին իրեն հայտնի դառնալուց հետո Պայմանագրում նշված կարգով և ժամկետում այդ մասին չի տեղեկացրել Ապահովագրողին,
2. Ապահովադիրը կանխամտածված չի ձեռնարկել անհրաժեշտ և հասանելի միջոցներ վնասի չափի նվազեցման ուղղությամբ,
3. Ապահովադիրը ներկայացրել է կեղծ տեղեկություններ և/կամ փաստաթղթեր,
4. Ապահովադիրն Ապահովագրողին չի փոխանցել բոլոր այն փաստաթղթերն ու ապացույցները, որոնք Ապահովագրողին անհրաժեշտ են հետադարձ պահանջի իրավունքի (սուբրոգացիա) իրականացման համար,
5. Ապահովադիրը չի տրամադրել վնասված գույքի զննության հնարավորություն կամ վնասված գույքը վերանորոգվել է, մինչև Ապահովագրողի կողմից սույն Պայմաններին համապատասխան դրա զննումը, ինչը հնարավորություն չի տալիս հստակ որոշել Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և առաջացած վնասների չափը,
6. Չի իրականացրել կամ ոչ պատշաճ կերպով է իրականացրել սույն պայմաններով և/կամ ապահովագրության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները,
7. սույն Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

12.20. Ապահովագրական հատուցման վճարման մերժման մասին որոշումը Ապահովադրին տրամադրվում է գրավոր կերպով՝ մերժման պատճառների հիմնավորմամբ:

### **13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)**

13.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհատյալ հարեյի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև կառավարության կողմից այնպիսի որոշումների ընդունման, որոնցով անհնարին է դառնում նախկինում սահմանված պարտականությունների կատարումը:

13.2. Այն դեպքում, երբ 13.1. կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության

Ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում առկա և հնարավոր վնասների փոխհատուցման համար:

13.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը

**14. ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

14.1. Ապահովադիրը պարտավոր է Պայմանագրի կնքման պահին տվյալ օբյեկտի գծով այլ ապահովագրական ընկերությունների հետ կնքված ապահովագրության այն պայմանագրերի մասին, որոնք գործելու են Պայմանագրի հետ միաժամանակ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին, ինչպես նաև նույն կերպ Ապահովագրողին տեղեկացնել Պայմանագրի կնքումից հետո կնքվելիք ապահովագրության նույնօրինակ պայմանագրերի մասին՝ դրանց կնքումից հետո անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում: Տվյալ ծանուցման մեջ պետք է նշված լինի վերոհիշյալ ապահովագրական ընկերության անվանումը, այդ ապահովագրական ընկերության հետ կնքված ապահովագրության պայմանագրի համարը, պայմանագրի գործողության ժամկետը, ապահովագրված ռիսկերը, ապահովագրական գումարը և չհատուցվող գումարը:

**15. ՍՈՒԲՐՈՂՉԱՑԻՍ**

15.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադիրին պատճառված վնասից բխող նրա (Շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

15.2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադիրի (Շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

15.3. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

15.4. Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադիրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի Ապահովադիրից պահանջելու վերադարձնել վճարված հատուցման գումարը:

15.5. Եթե Ապահովադիրը կամ Շահառուն երրորդ անձանցից իրեն պատճառված գույքային վնասի դիմաց ստացել է հատուցում, ապա Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմանագրի և սույն Պայմանների պահանջներով հաշվարկված

հատուցման վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից Ապահովադրի/Շահառուի ստացած գումարի տարբերությունը:

15.6. Բոլոր այն դեպքերում, երբ Ապահովագրական հատուցում կատարելուց հետո պարզ է դառնում, որ դեպքն Ապահովագրական պատահար չէ և/կամ ենթակա չէ հատուցման, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից/Շահառուից ետ պահանջել վճարված հատուցման գումարը և լրացուցիչ ծախսերը:

## **16. ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒՄԸ**

16.1. Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերից բխող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը քննվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

16.2. Վնասի չափի և դրա պատճառների վերաբերյալ վեճերի առաջացման դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացում: Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունն անց է կացվում այն պահանջած կողմի հաշվին: Եթե փորձաքննությունն անց է կացվել Ապահովադրի հաշվին, և փորձաքննության արդյունքները ճանաչվել են Ապահովագրողի կողմից, ապա վերջինս հատուցում է Ապահովադրին փորձաքննության եզրակացության մեջ նշված վնասի չափով: Ընդ որում՝ հատուցման ընդհանուր չափը չի կարող գերազանցել Ապահովագրական պատահարի պահին Ապահովագրողի պատասխանատվության ընդհանուր չափը: